ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

24 հունվարի 2013 թվականի թիվ 1 - Ա

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՓՈՐՁԱՔՆՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲՍՓ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԲԺԻՇԿ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի ,,Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին'' թիվ 276-Ն որոշմամբ հաստատված կարգի 5.1. կետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի 17.01.2013 թվականի ՍՔ/02.2/331-13 գրությունը

Կ ա ր գ ա դ ր ում ե մ.

1. Հաստատել առաջին անգամ փորձաքննվող անձանց բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ հանձնաժողովի նիստին մասնակցող բժիշկ մասնագետների ցանկը՝ համաձայն հավելվածի /կցվում է/:
2. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝ առաջին անգամ փորձաքննվող անձանց բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ հանձնաժողովի նիստին մասնակցող բժիշկ մասնագետների ցանկը ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարություն:
3. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝ ապահովել վերոնշյալ մասնագետների մասնակցությունը հանձնաժողովի աշխատանքներին:
4. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2013թ. հունվարի 24
Քաջարան